ԲԻՐԹԵԼԻՆ ԵՒ ՍՄԲԱՏԱ ԵՒ ԷԼԻԿՈՒՄԻՆ, ՑԱ|ԶԴԷ ԱՒՐՊԷԼԷՆՑ, ԵՒ ԿԵՆԱԿԻՑ ԻՄ ԽՈՐԻՇԱՀ, ԴՈՒՍՏՐ ԻՇԽԱՆԻՆ ՎԱՐԴԱՆ[Ն]|Ա ԵՒ ԴՈՓԻՆ ՓՐ . . . ՐԵՆ, ՑԱԶԴԷՍ ՍԵՆԻՔԱՐԻՄԱՆՑ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԼԱՆՑ ՄԵՐՈՑ, ՇԻՆԵՑԱՔ ԶՀՈԴԵՏՈՒՆՍ Ի ՓՐԿՈՒԹԻ. ՀՈԴՈՑ ՄԵՐ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԵՒ ԵՂԲԱՐՑ ՄԵՐ Ի ՔՍ ՆՆՋԵՑԵԼՈՑ. ԵՒ ԿԵՆԱՑ ԵՂԲԱՐՑ ԻՄՈՑ ԵՒ ՈՐԴՈՑ ՍԱՐՔՍԻ ԵՒ ՀՈՎԱՆԻՍԻ ՔԱՀԱՆԱՒ,| ՔՐԴԻՆ ԵՒ ՎԱՐԴԻՅՆ: ԱՂԱՉԵՄՔ ԶՊԱՏԱՀՈՂՍԴ ՑԻՇԵԼ ԶՄԵԶ Ի ՔՍ: ՍԿԻԶԲՆ ՏԱՆՍ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻՆ ԵՍԱՌ, ԵՒ ԿԱ|ՏԱՐՈՒՄՆ ԱՂԱՒԹԻՒՔ ՆՈՐԱ. Ի ԹՎԻՍ :ՉՁԱ: (1332):

Ծանոթ. *Բոլոր հրատարակիչները Զեսարի հոր անունը վերծանել են Սմբատ, փոխանակ Լիպարտի. միայն Ալիշանը պարսկերենի թարգմանության մեջ ճիշտ է կարդացել։*

*Հրատ. Ջալալեանց, 164. Բաջբերունի, Փորձ, 1879, № 9, 115։*
*Ալիշան, 164—165։* МАК, *XIII, 117—118։*

## 34. ՄԱՐՏԻՐՈՍ ԴՅՈՒՂ

*Մարտիրոսը մեկն է պատմական Հայաստանի այն սակավաթիվ գյուղերից, որի հիմնադրման ստույգ տարեթիվը և հիմնարկողների անունները պահպանվել են։ Այս կարևոր տեղեկությունները արձանագրված են գյուղամիջի աղբյուրի մոտ՝ 1283 թ. կանգնեցված, 3 մետրից ավելի բարձրություն ունեցող, վարդագույն գրանիտե և գեղաքանդակ խաչքարի վրա։*

*Այդ շրջանում գյուղը եղել է փոքր, ընդամենը 7 չափ հարկով, ըստ Ստ. Օրբելյանի ցուցակի (գավառի ամենամեծ գյուղը՝ Սարկողովքը՝ վճարել է 20 չափ)։*

*Մարտիրոս գյուղի մեջ և շրջակայքում կան արձանագրություններ ունեցող բազմաթիվ հուշարձաններ, որոնք բաժանում ենք հետևյալ երեք խմբերի.*

Ա. Վիմափորերի խումբ, *գտնվում են գյուղից մոտ երկու կիլոմետր հեռու, դեպի հարավ-արևելք։ Նզար կոչվող կրախառն ավազաքարե լեռան մեջ փորված այս հուշարձանը բաղկացած է երեք մասից՝ եկեղեցի, գավիթ և մի քառակուսի հատակագծով շենքից, որը հավանաբար տապանատան նպատակով է շինված։*

*Պատերին պահպանված արձանագրության համաձայն հուշարձանները շինված են 1286 թ.՝ ոմն Մաթեոս վարդապետի ջանքով։*

*Առանձին հետաքրքրություն է ներկայացնում եկեղեցու հյուսիսային պատի կարճ արձանագրությունը,* Գրգորիկ վ̅պ *հիշատակությամբ, որը մենք վերծանում ենք* Գրգորիկ վարդպետ, *և նրան համարում վիմափորերը կառուցող ճարտարապետը (արձ. № 548)։*

*Վիմափորերի դիմաց, գետակի ձախ ափին՝ փոքրիկ բլրի վրա եղել է մեծ գերեզմանատուն, որից այժմ մի քանի խաչքարեր և տապանաքարեր են մնացել։ Դրանցից միայն մեկն ունի արձանագրություն, որը վիմափորերը շինել տվող Մաթեոս վարդապետի կանգնեցրածն է։ Հետաքրքիր է, որ այդ խաչքարը թվագրված է 1275, այսինքն վիմափորերի կառուցումից 11 տարի առաջ (արձ. № 546)։*

Բ. Գյուղամիջի խումբ. *այս խմբի մեջ կարևորներն են. 1. Գյուղի հիմնադրման առթիվ աղբյուրի մոտ կանգնեցրած խաչքար-հիշատակարանը՝ 1283 թվ.։ 2. Գյուղամիջի նոր եկեղեցու պատերի մեջ ագուցված են ավելի հին շենքի քանդակազարդ և արձանագրված քարեր։ Դրանցից առավել կարևորներն են եկեղեցու կտրանը գտնվող կիսաշրջան զույգ քարերը արձանագրության մնացորդներով։ Մեկի վրա պահպանվել է թվականը՝ 1279 թ., որն ապացուցում է գյուղի հիմնադրումից առաջ տեղում գոյություն ունեցող ինչ-որ շինության փաստը։ 3. Գերեզմանատուն և մատուռ, որոնք գտնվում են գյուղի հյուսիս-արևելյան եզրին։ Այստեղի տապանաքարերից հնագույնն ունի 1207 և վերջինը 1351 թվականները։ 4. Գերեզմանատուն, որը*

գտնվում է գյուղի արևմտյան եզրին, ընդարձակ է և այժմ էլ օգտագործվում է։ Բազմաթիվ տապանագրերից հնագույնը թվագրված է 1451 և վերջինը՝ 1712 թվականներով։

Գ. Վերին յին գյուղատեղ. գտնվում է Մարտիրոսից դեպի արևելք, մոտ երկու կիլոմետր հեռու, բարձր լեռնալանջի հարթության վրա՝ փոքր լճի մոտ։ Գյուղատեղի գլխին գտնվում են երեք նորաշեն մատուռներ՝ որոնցից երկուսն ավելի վեր։ Դրանք կոչվում են ս. Հռիփսիմե և ս. Գայանե։ Ս. Հռիփսիմեն պետք է որ հնագույն շենքի վրա վերակառուցված լինի, որովհետև նրա ներսում դրված են երեք շատ մեծ և հնագույն խաչքարեր։ Դրանցից մեկը բեմի վրա է, իսկ երկուսը նրա կողքերին՝ պատվանդանների վրա, իրենց նախնական տեղում։ Այդ խաչքարի մոնումենտալ քանդակազարդերը և ընդհանուր ձևավորումն անսխալ կերպով առնչվում են X դարի արվեստի հետ. դժբախտաբար ոչ մեկի վրա արձանագրություն չկա։

Վերոհիշյալ մատուռների արանքում կանգնած է մի մեծ, սալանման խաչքար՝ Երեմիա աբեղայի հիշատակագրով, 1499 թ.։

Մարտիրոս գյուղը հիմնադրվել է, ինչպես տեսանք, 1283 թ., բայց գյուղամիջում և շրջակայքում կան ավելի հին թվական ունեցող հուշարձաններ ու արձանագրություններ, որոնք ապացույց են միջավայրի ավելի հին շենության։

Ժողովածուում Մարտիրոս գյուղից և շրջապատից ամփոփված են 47 արձանագրություններ, որոնցից 27-ը հրատարակվում են առաջին անգամ։

## ՎԻՄԱՓՈՐԵՐԻ ԽՈՒՄԲ
## ԳՅՈՒՂԻՑ ՄՈՏ ԵՐԿՈՒ ԿԻԼՈՄԵՏՐ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՔ

**546. ԽԱՉՔԱՐ,** *մեծ և պարզ. կանգնած է մեծ ժայռաբեկորի պատվանդանի վրա. գտնվում է վիմափորերի արևմուտքում, գետակի աջ ափի գերեզմանատան մեջ. խաչի շուրջը և տակին.*



ԿԱՄԱՒ ԱՑ, ԻՇԽԱՆՈՒԹԲ. ԱՄԻՐ ՀԱՍԱՆԱ., ԵՍ ՄԱԹԷՈՍ Վ.ԱՐԴԱՊԵՏ ԿԱՆԳՆԵՑԻ ՋՆՇԱՆՍ ԻՆՋ ԵՒ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ԱՍԷՔ ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՆՈՑ⌊Ա⌋.
ԹՎ. :ՉԻԴ: (1275)

*Հրատ. Ջալալեանց, 201, Քաջբերունի, Արարատ, 1891, թիվ Գ, 130, Ալիշան, 176, MAK, 158։ Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, 129,*

Լուսանկ. 199

***547. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ վիմափոր եկեղեցու հարավային և արևմայան պատերին, ներքուստ, 10 տող.***



ԿԱՄԱՒՆ ԱՅ, Ի ՀԱՅՐ⌊ԱՊԵՏՈՒ-
ԹԵ⌋. ՏՆ|. ⌈ՑԱ⌉ԿԼՈԲԱ| ԵՒ Ի ՔԱ-
ՀԱՆԱ⌊Յ⌋ԱՊԵՏՈՒԹԵ.| ⌈Գ⌉ԱԻԱՌԻՍ
ՏՐ. ՍԱՐԳՍԻ ԵՒ Ի ՏԷՐՈՒԹԵ. ԻՇ-
ԽԼԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՆ ՊՌՈՇՆ ԵՒ
ՈՐԴՒՈՑ| ⌈ՆՈՐ⌉ԻՆ ՊԱՊԱՔԻՆ ԵՒ
ՀԱՍԱՆԱ ԵՒ ՈՐ|ԴՒՈ Ն⌉ՈՐԻՆ ԷԱՉՌ
ԵՒ ՄԱԻՐ ՆՈՐԻՆ| ⌈ԹԱՃԵ⌉ՐՈՑՆ,
ԵՍ՝ ՄԱԹ⌊ԷՈՍ⌋ ՎԱՐԴԱՊԵՏՍ ԿԱ-
⌊ՌՈՒՑԻ⌋ ԵՒ ԿԱՏԱՐԵՑԻ ՁԵ|ԿԵՂԵ⌉-
ՑԻՍ Ի ԲԱՐԷԽԱԻՍՈՒԹՆ. ԻՆՋ ԵՒ
ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ԾՆՈՂ|ԱՑ Մ⌉ԵՐՈՑ ԵՒ
ՊԱՐՈՆԱՑ ՄԵՐ ԵՒ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՒԱՏԱՑ⌊ԵԼՈՑ⌋. ՈՐՔ ՄՏ|⌈ԱՆԷՔ⌉ ԱԾ. ՈՂՈՐՄԻ
ԱՍԷՔ ՄԵՋ ԵՒ ՁԵԶ ԵՂԻՑԻ. Ի ԹՎ. :ՉԼԵ: (1286)

Ծանոթ. *Վերջին չորս երկար տողերը շարունակվում են արևմայան պատի վրա։ 9-րդ տողում* ԱՄԵՆԱՑՆ *գրված է նշանագրով, որ հազվադեպ է արձանագրությունների մեջ։*

*Հրատ. Ջալալեանց, Բ, 201։ Քաջբերունի, Արարատ, 1891, թիվ Գ, 129։ Ալիշան, 176։* MAK, *158։ Լալաեան, Ազգ. Հանդ. XII, 289։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 20—21 (միայն արևմտյան պատ)։*

Լուսանկ. 200

***548. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ վիմափոր եկեղեցու հյուսիսային պատին, բեմի մոտ, պատուհանի կողքին, ներքուստ, 8 տող.***



ԳՒԳՈՐԻԿ Վ⌊ԱՐԴ⌋Պ⌊ԵՏ⌋. |⌈ԿԱՄԱ⌉ՒՆ ԱՅ
ԵՍ| ⌈ԳՐԳ⌉ՈՐԻԿՍ ՄԻ|⌈ԱԲԱՆԵՑԱՅ⌉ ՍԲ ԱԾ|-
⌈ԱԾՆԻՍ⌉ . . . ՄԱԹԷՈՍ| ՎԱՐԴԱՊԵՏ
. . . ԾԱ . . . ՇԻ . . .

Ծանոթ. *Առաջին տողն անջատ արձանագրություն է։ Մենք այն* ԳՐԳՈՐԻԿ ՎԱՐԴՊԵՏ *ենք վերծանում, նկատի ունենալով, որ* Վ.արդապետ *բառը նախորդ երկու արձանագրությունների մեջ* ՎԴ *ձևով է ավված։ Գրգորիկին համարում ենք վիմափորերի* վարդպետ-ճարտարապետը, *հետևաբար և արձանագրությունը գրված է շինության ժամանակ՝ 1286 թվականին։*

*Երկրորդ արձանագրությունը գրվել է հետո, երբ նույն* վարդպետ *Գրգորիկը միաբանել է վանքին և հենց իր հիշատակագրության տակ էլ ավելացրել է այս նոր դեպքի մասին։*

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 21 (խիստ թերի)։*

Լուսանկ. 201'

*549. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ վիմափոր եկեղեցու հյուսիսային պատին, մուտքից վեր, ներքուստ, 4 տող.*



ԻՏԱՐԻՆ :Ա: ԺԱՄ ԹՐՆ|ՁԻՆ՝ ԽԱՁԻ :Ը: ԱՒՐԷՔՆ. |ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ, Խ|Ա-ՓԱՆԻՉՔՆ ԴԱՏԻՆ ՑԱՑ.:

Ծանոթ. *ժամանակով մաս պետք է լինի կառուցմանը։*

*550. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ վիմափոր եկեղեցու հյուսիս-արևելյան նիշ ավանդատան ճակատին, ներքուստ, 8 տող՝*

ՄԱ........
ԴՆՍ........
ԽԻՆԷ........
ՄԽԱՆԷՔ....
ՅԻՇԷՔ......
ՅԱՂԱԹ......
ՋՐԴԻ......
ՆՐԱ........

550

Ծանոթ. *Բոլոր տողերի վերջավորությունները հողմնահարված-թափված են։ Կարելի է կռահել, որ շինությանը նպաստած կնոջ հիշատակագրություն է, որը խնդրում է հիշել իրեն և իր որդուն, դժբախտաբար երկուսի անուններն էլ ջնջված են։*

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 21։*

ՎԻՄԱՓՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԴԻՄԱՑ, ԳԵՏԱԿԻ ՁԱԽ ԱՓԻ ԲԼՐԱԿԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԵՋ ԵՂԵԼ ԵՆ ՆԱԵՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՑԻՑ ՈՉ ՄԵԿՆ ԱՅԺՄ ՉԿԱ։

*551. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.*

Կամաւն Այ և յիշխանութե Պռոշայ և որդոյ| նորա Հասանայ կանգնեցաւ նշանս յիշատակ| Քաւթարին. Ած ողորմի նոցա, ամէն. թվին :ՉԻԸ: (1279):

*Հրատ. Ջալալեանց, 202։ Ալիշան, 176։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 18։*

*552. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.*

Ես Ալէքսանոս ու Մկ|րտիչս կանգնեցաք զխ|աչս ծնողի մերոյ Առաքելի| որք կարդ|էք յաղա|ւթս յի|շէք. ի թվ. :ՉԼ: Գրիչ: (1280):

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 18։*

*553. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.*

Բարեպաշտ իշխանին Ամիր Հասանայ ես Արիստակէս,| Աքանէս և Յովհաննէս կանգնեցաք զխաչս հօր| մերոյ Մխիթարա, որ կարդայք յաղաւթս յիշեցէք.| թվին :ՉԼԳ: (1284):

*Հրատ. Ջալալեանց, 102։ Ալիշան, 177։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 18,* MAK, *158։*

### 554. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.

Կամաւն Այ և իշխանութբ | Ամիր Հասանայ մեք եղբարքս Ալեքսի և Վահրամ կանգնեցաք զխաչս | հաւր մեր Մխիթարայ և ամուսնոյ Վահրամա և... տիկնոջ. որք կարդայք Ած ողորմի ասէք. ի թվ :ՉԼԵ: Դրխչ: (1286):

Հրատ. Ջալալեանց, 202։ Ալիշան, 177։ МАК, 159։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 18—19, Ա. 146—147։

### 555. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐԻ ՎՐԱ, կողքին.

· · · Մխիթար ⌈աղ⌉ապահ յիշեցէք ի Քս. ի թվ: ՁՃԽԵ:

Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 19։

### 556. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ, 5 տող.

Պայծառագեղ մանկիկ բարի,
Ով Մանասէ քաջ և արի.
. . . . . . . . . . . . . .
Ծոխ զարմանալի
Ցիշէ Քս զքեզ ի բարի .թվ. :Ջ: (1451):

Ծանոթ. *Քարը սալիկ է եղել և գլխին խաչքար։ 3-րդ տողը փակագրերով, հրատարակիչը չի կարողացել կարդալ։*

Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Ր, 19։

### 557. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.

Այս է տապան աղախնոյ Գուլբստանին. թվ: ՋԽ: (1491)

Ծանոթ. *Տապանաքարը սալիկ է եղել և գլխին խաչքար։*

Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Դ, 19։

### 558. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.

Այս է տապանս Արղունին. թվ :ՋԽԵ: (1496):

Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 19։

### 559. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.

Այս է տապան Ոսկու ղանին, թվ :ՋԽԸ: (1499):

Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 19։

### 560. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.

թվ. :ՋԾ: Մանուկ, Սուքիասի եղբայր. (1501):

Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 19։

***561. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.***

Այս է տապան Միրաղին. թվ :Ջծ: (1501):

Ծանոթ. *Գերեզմանաքարը փոքրիկ է. մյուս երեսին վագրի քանդակ:*

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 19:*

***562. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.*** *գտնվելիս է եղել վիմավոր եկեղեցիների առաջ.*

Այս է տապան Ցոհաններ բէգին. թվին :Ջիէ: (1478):

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1891, Թիվ Գ, 130: Ալիշան, 177:*

ԴՅՈՒՂԱՄԻՋԻ ԽՈՒՄԲ

***563. ԽԱՉՔԱՐ,*** *մեծ (3,35 × 1,34 մետր), պարզ ու վեհատեսիլ, դեղնավուն ղրանիտ է՝ կանգնած պատվանդանի վրա,՝ գյուղամիջում աղբյուրի մոտ. չորս կողմում գրված է գյուղի հիմնադրման հիշատակարանը, 12 տող.*



ՑԱՆՈՒՆ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ Ա̅Ց̅. ԵՍ ՄԽԻ-
Թ֊ԱՐ, ՈՐԴԻ ԴԵՂ֊ԿԱ, ՀՐԱՄԱՆԱՒ ԻՇ-
ԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՆ| ՄԵԾԻՆ ՊՌԱՒՇՈ|
ԵՒ ՈՐԴՒՈ ԻՒՐՈ ՊԱՐՈՆ ՀԱՍԱՆԱ|,
ՇԻՆԵՑԻ ԶԳԵԱՒՂՍ ԶՄԱՐՏԻՐՈՍՍ ԵՒ
ԿԱՆԿՆԵՑ|Ի ԶԽԱՉՍ Ի ԴՈՒՌՆ Մ̅Բ̅.
ՎԿԱՅԱՐԱՆԻՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ.
ԻՆՋ Ե|Ւ ԱՄՈՒՍՆՈ ԻՄՈ ՄԱՄԵՐԻՆ|,
ԵՒ ՈՐԴՒՈ ԻՄՈ ԽԱՐԻՓՇԱՀԻՆ, ԵՒ
ԴՍՏԵՐ ԻՄՈ ՌՋՈՒՔԱՆԻՆ: |Ք̅Ս̅. Ց̅Ս̅.
ԿԱԶՄԵՑԱՒ ՁԵՌԱՄԲ ՇՆՀ|ԱՒՈՐԻՍ. Ի
ԹՎ. :ՁԼԲ: (1283) ՈՐՔ |ԸՆԹԵՌՆՈՒՔ
ՅԻՇԵՑ֊ԷՔ| Ի ՏՐ.:

*Հրատ. Ջալալեանց, 200—201: Քաջբերունի, Արարատ, 1891, Թիվ Բ, 109: Ալիշան, 176: ՄԱԿ, 157 (Թերի և խառն): Լալաեան, Ազգ. Հանդ. XII, 288: Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 5—6 (Թյուրիմացաբար վերնագրված՝* Վերին Ախտա):

Լուսանկ. 202

**564.** ***ՃԱԿԱՏԱՔԱՐԵՐ ՄՈՒՏՔԻ,*** *երկու հատ, զանվում են գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցու կտրանը. երեսներին դրված 5 տող.*



Ի ԹՎ. ։ՉԻԸ։ (1279)| ԿԱՄԱՒՆ ԱՅ ⌈ՑԻ⌉Շ⌊Խ⌋Ա-ՆՈՒԹՆ ԳՐ|ՈՇՈ⌉Ց։ԵՒ Ո⌈ՐԴՈՑ Ն⌉ՈՐԱ ՀԱՍԱՆԱ⌉| . . . ՑԻՇԱՏԱԿ ՔՍ| . . . ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՆՈՑ⌈Ա.

Ծանոթ. *Այդ երկու քարերն էլ այժմ կիսաշրջանի ձև ունեն՝ նույն զարդաքանդակներով, նույն չափերի (տրամագիծը 1,85 և հատվածի շառավիղը 1,5)։ Չենք հասկանում նրանց նշանակությունը։ Եթե հնում եղել են կիսակամար ձևով ճակատաքարեր, ապա արձանագրությունները հետո պետք է գրված լինեն, որովհետև նրանք կամարին հակառակ դիրքով են գրված։ Մյուս կողմից՝ գրելու ժամանակ քարերն ավելի մեծ պետք է եղած լինեին, որովհետև տողերը թերի են՝ սկզբից և վերջից։ Հավանական է, որ սկզբում սեղանակերպ բարավորներ են եղել։ Այժմ դրված են XVII դարում վերակառուցված եկեղեցու կտրան արևմտյան եզրին, տանիքի վրա։ Նրանց վրա մեկ սանտիմետր խորությամբ քառակուսի փոսեր են արված, հավանաբար փոքրիկ զանգակատան սյուների համար, որոնք այժմ չկան։*

*Առաջին տողը՝ թվականը, մեկ քարի վրա է, մնացած չորսը՝ մյուսի։*

Լուսանկ. 203

**565.** ***ԱՐԵՎԻ ԺԱՄԱՑՈՒՅՑ,*** *քանդակված է դեղնագույն ղրանիտե մեծ քարի վրա։ Այն հին շենքից է՝ ագուցված գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատի մեջ՝ ժամերը ցույց տվող տառերը.*

Ա,Բ,Գ,Դ,Ե,Զ,Է,Ը,Թ,Ժ,Ի,Լ

Ծանոթ. *Տառերն ուռուցիկ են, Ժ-ն դրված է գլխիվայր՝ տեղին հարմար։*

Լուսանկ. 204

**566.** ***ԲԵԿՈՐԻ ՎՐԱ,*** *ագուցված ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի մեջ, արտաքուստ, 1 տող.*



. . . ՍՏԱՐԱՆ . . .

Լուսանկ. 205

**567.** ***ԽԱՉՔԱՐ,*** *փոքր, հասարակ, ագուցված է աղբյուրի գլխի մոտ, պատի մեջ, թևերի շուրջը, միայն թվականը.*



ԹՎ. ։ՋՁ։ (1531)

**568.** ***ԽԱՉՔԱՐ,*** *փոքր, վերին մասը կոտրված. ագուցված է ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի մեջ. արտաքուստ, վրան միայն թվականը.*



ԹՎ. ։ՌՂԳ։ (1644)

Լուսանկ. 206

**569.** ***ԽԱՉՔԱՐ,*** *կանգնած է մատուռի մեջ, ճակատին և տակին 7 տող.*



ԱԿՈԲ ԿԱՆԿ[Ն]ԵՑ[Ի] ԽԱՉՍ ԻՆՁ ԵՒ ԱՄՈՒ[Ս]ՆՈՑ ԻՄՈՑ. ՈՎ ԿԱՐԴԷ[Ք] ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԷ[Ք].
Ի ԹՎԻՍ :ՉԶ: (1257):

**570.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *տաշած, գտնվում է մատուռի հյուսիսում, երեսին 2 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՂԱԽՆՈ[Յ]Ս Ա̅Ծ.
ՍԺԳՈՒՆԻՆ. Թ̅Վ. :ՋԻ: (1471)

**571.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *գտնվում է մատուռի հարավում, օրորոցաձև, հարավային երեսին 1 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Խ[ՈՒ]ԹԼՈՒԲԷԿԻՆ.

Ծանոթ. *Ըստ գրչության, ժամանակակից նախորդին։*

**572.** ***ԽԱՉՔԱՐ,*** *կանգնած է մատուռի հյուսիսում, գերեզմանատան մեջ, վրան 5 տող.*



Թ̅Վ. :Ռ: (1551)| ԿԱ[Ն]ԿՆԵՑՕ Խ[Ա]ՉՍ ԲԱՐԷ-|
ԽՈՍ [ՀՈԳՈՑՆ]| . . . ԻՐ ՈՐԴԻՆ.

Ծանոթ. *Աստղանշված մասում գնդակի հինգ ջարդվածքներ կան, որոնք և խանգարում են վերծանությանը։ ՀՈԳՈՑՆ բառից հետո կարելի է ենթադրել ՍՂԵՄՈՍ անձնանունը։*

## ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

## ԳՅՈՒՂԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵԶՐԻՆ

*Գերեզմանատան հյուսիս-արևելյան մասում գտնվում են մի խումբ խաչքարեր և տապանաքարեր, որոնք պատկանում են Բախշաիշի ընտանիքին (1—11)։*

***573. ԽԱՉՔԱՐ**, պատվանդանի վրա, որի չորս շրջանակներին՝*



ԵՍ ԲԱԽՇԱԻՇ ԿԱՆԿ⌊Ն⌋ԵՑԻ ԽԱՉՍ ՅԻՇ⌊Ա⌋Տ⌊Ա⌋Կ Կ|ԵՆԱԿՑԻՆ ԻՄ| ԳՕՐՔԼ,ՈՒԻՆ ԵՒ ՈՐԴՒ||ՑՆ ԵՂ,ԻԿԻՆ,| ԸՍՊՀԱՆՇԻՆ:

Ծանոթ. *Վերջին անունը Ասպահանշահ անձնանվան տեղական ձևն է, որը հետո կրկնվում է այլ ձևով՝ ժամանակով մոտ է հաջորդին։*

Լուսանկ. 207

***574. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, տափակ, գտնվում է նախորդ խաչքարի գլխաց, երեսին 2 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Ս,Ղ,ԱԽՆՈ|ՅՍ ԱՅ. ԳՕՐՔԼ,ՈՒԻՆ. Թ͞Վ. :Ջ: ՆՐ. (1451):

***575. ԽԱՉՔԱՐ**, կանգնած է նախորդների մոտ, ճակատին 2 տող.*



ԿԱՆԿՆԵՑԱՒ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒ.| ԸՍՊԱՀԱՆՇԻՆ. ԹՎԻՍ :Ջ: (1451):

Ծանոթ. *Խաչքարի առաջ կա մի մեծ, եռաստիճան տապանաքար՝ առանց արձանագրության։*

576. ԽԱՉՔԱՐ, կանգնած է եկեղեցատեղին միակտուր պատվանդանի վրա. նախորդների մոտ, չորս շրջանակներին գրված է.



ԵՍ ԲԱԽՇԱԻՇՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՄՕՐՆ ԻՄՈ ՏՈՒԱՆՏՈ. Թ԰Վ․ԻՍ ։ՋԽԲ։ (1493)։

Լուսանկ. 208

577. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է նախորդ խաչքարի դիմաց, երեսին 2 տող.



ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ Տ|ՈՒԱՆՏՈ.

ԹՎԻՍ ։ՋԽԲ։ (1493)

578. ԽԱՉՔԱՐ ԵՎ ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվում են նախորդների մոտ՝ հարավից. խաչքարն ագուցված է տապանաքարի արևելյան ծայրում արված փոսի մեջ՝ վրան միայն թվականը, իսկ շարունակությունը տապանաքարի վրա՝ երեք տողով.





ԹՎ․ ։ՋԽԲ։ (1493)| ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ| ԹՈՎՆԻՆԱ։

579. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ և տափակ, նախորդի մոտ արևելքից, երեսին 1 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՄԻՐ ՍԱՐԳՍԻՆ։

580. ԽԱՉՔԱՐ, փոքր և պարզ, կանգնած է գերեզմանատան հյուսիս արևելյան մասում, շրջանակներին 3 տող.



ԽԱՉՍ ՑԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՑ ԱՂԱԽՆՈՑ| ԱՑ. ՇԱՐՄԱԽՈՐԻՆ։

**581. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ և մեծ, նախորդ խաչքարի դիմաց, երեսին 3 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՂԱԽՆՈՑՍ ԱՑ· ՇԱՐՄԱ|ՈՐԻՆ, ՈՐ ԷՐ Ո . . . ԴՐՈՒՍՏՐ| ԸՍՊՀԱՆՇԻՆ, ՅԻՇԷՔ Ի ՔՍ. Ի :ՋԽԹ: (1500):

**582. ԽԱՉՔԱՐ**, *պատվանդանի վրա, նախորդին կից է հյուսիսից. շրջանակներին գրված է.*



ԵՍ ՄՈՒՐԱՏՍ, ՓԱՇԻԿՍ, ԿԱՆԿՆ|ԵՑԱՔ| ԶԽ|ԱՉՍ ՀՕՐՆ ՄԵՐ ԲԱԽՇԱՑԻՆ| ԹՎ. :ՋՀԳ: (1524):

Ծանոթ. *Անշուշտ Բախշաիշ անունն է՝ տարբեր գրությամբ, հաջորդ տապանաքարի վրա գրված է ճիշտ։*

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 19 (մեկ տողը միայն)։*

Լուսանկ. 209

**583. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *մեծ և տափակ, գտնվում է նախորդ խաչքարի դիմաց. երեսին 2 տող.*



ԶԱՅՍ ԲԱԽՇԱԻՇՍ Ի| ՁԵՐ ՍԲ ՅԱՂՕԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

**584. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐԻ** *վրա, ընկած է գերեզմանատան կենտրոնում, 4 տող.*



ԹՎ.| :ՋԺԲ: (1463) ՔՍ ՈՂՈՐՄԻ| ՍԱՄՎԷՆ:

Լուսանկ. 210

*585. ԽԱՉՔԱՐ, պատվանդանի վրա. գտնվում է գերեզմանատան հարավ-արևելյան անկյունում, շրջանակներին և թևերի շուրջը, 4 տող.*



ԵՍ ՍԷՐՈԲ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ| ՀՕՐ
ԻՄ ՍՐ|Ա.ՊԻՈՆԻՆ ԵՒ ՄՕՐ ԻՄ ԳՈՀԱՐԻՆ.| ԹՎ.
:ՋԾԳ: (1504):

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 19 (մերի սկզբից):*

Լուսանկ. 211

*586. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդ խաչքարի դիմաց, երեսին 2 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԾԱՌԱԻՍ| ԱՅ.
ՍՐԱ.ՊԻՈՆԻՆ. ԹՎ. :ՋԾԳ: (1504):

*587. ԽԱՉՔԱՐ, փոքր, սպիտակավուն քարից, կանգնած է գերեզմանատան հյուսիսային մասում. ճակատին և խորանի վերին կողմը.*



ԽԱՉՍ ՅԻՇԱ⌞ՏԱ⌟Կ ⌞Է⌟ ՊԱՊԻՆ.|
ԹՎ. :ՌԷ: (1558):

Լուսանկ. 212

**588. ԽԱՉՔԱՐ**, *փոքր, ճակատին և տակին.*



ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ Մ˻Ա˼Ր˻ՏԻՐՈՍ|ԻՆ.|

Թ̅Վ. :ՌԷ: (1558)

Ծանոթ. *Անձնանունը գրված է սղված ձևով։ Կարելի է ՄԱՐԻԱՄԻՆ և՛ այլ կերպ վերծանել։*

Լուսանկ. 213

**589. ԽԱՉՔԱՐ**, *փոքր, կանգնած է գերեզմանատան հյուսիսային մասում, տակին 3 տող.*



ԽԱՉՍ Բ˻Ա|ՐԷԽ|Օ|Ս| ՀԱՍԱՆ ԾԱՆԻՆ։

**590. ԽԱՉՔԱՐ**, *փոքր, կանգնած է գերեզմանատան հարավային մասում, տակին 4 տող.*



ԿԱՆԿՆԵ|ՑՕ ԽԱՉՍ ԲԱՐԷԽ|ՈՍ

ՀՈԳԻՈ . . . Է ԿԻՆ։

Լուսանկ. 214

**591. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *մեծ, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան արևմտյան մասում, հարավային երեսին 4 տող հանգավոր։*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՐՏԻՐՈ˻Ս˼ ՆԱ-
ՀԱՏԱԿԻՆ, ՆԱԵՒ| ԼԱԼ, ՈՐԴ˻ՈՑՆ˼
ԵՒ ԱՄԵՆԵՑ˻ՈՒՆ˼, ՇԻՆԵԼ ՇԻՐԻՄ
ԻՒՐ Ծ|ՆՈՂԻՆ. ԹՎԻՆ :ՌՃԺ
ՍԷԿԻՆ, (1662) ՏԷՐ ԿԻՐԱԿՈՍ|:
ԿԱԶՄՈՂ ՍՈՐԻՆ։

Ծանոթ. *Փակագծի և սղման միաժամանակ գործողությունը և ո՛չ բոլոր դեպքերում պատվի գործածությունը՝ դժվարացնում են վստահելի վերծանությունը։ Մյուս կողմից՝ Կիրակոս կազմողի չափածո և հանգավոր գրելու ցանկությունը մթագնել է բովանդակությունը։ Հիմնական իմաստը հետևյալը պետք է լինի. ումն Մարտիրոս նահատակի համար նրա որդիներ Լալը և մյուսները շինել են տվել շիրմաքար և ցանկանում են, որ իրենք ևս հիշվեն։*

*Լալ անձնանունը գոյություն ունի Հայաստանում* XIV *դարից։*

Լուսանկ. 215

*592. ԽԱՉՔԱՐ, մեծ, պարզ ու արտահայտիչ, շինված է վարդագույն քարից, կանգնած է ս. Հռիփսիմե և ս. Գայանե մատուռների արանքում, աշխանակներին և խաչի թևերից վեր.*



ԿԱՄԱՒՆ ԱՑ. ԵՍ ԷՐԷՄԻԱ ԱԲԵՂԱ ԿԱ‚Ն,ԿՆԵՑԻ ՋԽ‚Ա,ՋՍ| Ի ՓՐԿՈՒԹ. ՀՈԳՈ| ԻՆՋ ԵՒ ԾՆՕՂԱՑ ԻՄ ԽՏՐՇԻՆ ԵՒ ՍՕՐ|ՂԱՆԻՆ: ԹՎ :ՋԽԸ: (1499)

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 19.*

## 35. ԳՅՈՄՈՒՐ ԳՅՈՒՂ

*Հավանաբար Ստ. Օրբելյանի ցուցակի Գոմք փոքրիկ գյուղն է՝ 6 չափ հարկով։*

*Գյուղի կենտրոնում կանգնած է մի գեղեցիկ որմնափակ խաչքար-հուշարձան, որն իր տեսակների մեջ լավագույններից է։ Այս հուշարձանն ունի մի եզակի առանձնահատկություն. նրան արևելքից կցված է մի փոքրիկ մատուռ։ Բարեբախտաբար ամբողջ մնացած այս կոթողն իր կառուցողական ձևերով, կենդանիների քանդակներով, զարդաքանդակներով և արձանագրություններով՝ մեր արվեստի ու պատմության մի թանկարժեք ու անսպառ գիրք է։ Հուշարձանի արժեքն ավելի է բարձրանում նրանով, որ այն կառուցող ճարտարապետների անուններն էլ պահպանվել են նրա պատին. դրանք Մխիթարը և Շնորհոր (Շնորհավոր) աղբար քարգործն են. վերջինիս ձեռակերտն է նաև Մարտիրոս գյուղի հիմնադրման առթիվ կանգնեցված խաչքար-հիշատակարանը։*

*Հուշարձանի շուրջը եղել է ընդարձակ գերեզմանատուն, որից այժմ մի քանի հասարակ խաչքարեր են մնացել։*

*Մի այլ եկեղեցի էլ գտնվում է քիչ դեպի հարավ, ճանապարհի եզրին։ Սա իր այժմյան ձևերով վերաբերում է XVI—XVII դարերին, բայց հավանաբար `ձևափոխվել է որմնափակ հուշարձանի արձանագրության մեջ հիշատակված եկեղեցու ավերակների վրա։*

*Արձանագրություն ունեցող մի այլ խաչքար էլ գտնվում է գյուղից դեպի արևմուտք «խաչդարասի» կոչված ձորամիջում՝ աղբյուրի մոտ, Ազիզբեկով տանող ճանապարհի կեսին (խաչքարն իր պատվանդանով այժմ ընկած է երեսնիվայր)։*